Հաստատում եմ՝

Տնօրենի և վարչատնտեսական մասի
համակարգողի պարտականությունները կատարող Ն. Հովհաննիսյան

ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ
7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ
«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ » ԱՌԱՐԿԱՅԻ
ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ, ՏԱՐԵԿԱՆ 108 ԺԱՄ

Ուսուցիչ՝ Քնարիկ Գալստյան

Հ.	Ժամ	Թեմա	Վերջնարդյունք
		ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ	
1.	**6/1**	Ե. Չարենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը Գաղափար բանաստեղծության մասին:	_ _
	6/2	«Հայրենիքում» բանաստեղծությունը	_*Ներկայացնի* Չարենցի կենսագրության հիմնական դրվագները: *Իմանա* բանաստեղծության ժանրային առանձնահատկություն-ները: _*Տիրապետի* թեմայում առկա նոր հասկացություններին, նոր բառերին և արտահայտություններին:
	6/3	«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը	_*Մեկնաբանի*՝ ինչ պատկերներով է հեղինակը ներկայացնում հայրենի երկիրը: _*Իմանա* իր ազգային պատկանելության, հայրենի երկրի կարևորության մասին: ~~*Ներկայացնի* բանաստեղծության հիմնական բովանդակությունը:~~ *Ներկայացնի* Հայաստանի կերպարը՝ ըստ բանաստեղծության: *Ուսումնասիրի և մեկնաբանի* գրողի օգտագործած բառապաշարը և պատկերավորման միջոցները և դրանք *գործածի* խոսքում:

	6/4	«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը	–Բանաստեղծությունից սովորած նոր բառերով *կազմի* նախադասություններ կամ գրավոր կապակցված խոսք: –*Մեկնաբանի* բանաստեղծության տրված հատվածը:
	6/5	«Տաղ անձնական» բանաստեղծությունը	–*Պատմելիս* օգտագործի հեղինակային բառապաշարը, –*անվանի* տեքստի գեղագիտական արժեքավոր հատվածները: –Համատեքստային բառերը, սովորած պատկերավորման միջոցները *կիրառի* խոսքում: –*Գնահատի* բնագրի բառապաշարը և հարստացնի սեփական բառապաշարը:
	6/6	«Տաղ անձնական» բանաստեղծությունը	–*Դուրս գրի* համատեքստային բառեր ու դրանք կիրառի խոսքում: –*Ներկայացնի՝* «Տաղ անձնական» բանաստեղծությունը ինչու է վերնագրել «Տաղ» և ինչու «անձնական» վերնագրով:
2.	**3/1**	Նաիրի Զարյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: «Հայրենի տուն» բանաստեղծությունը:	–*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը և ապրած ժամանակաշրջանը: –*Մեկնաբանի* հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունն իր վրա: –Բանաստեղծությունը *ներկայացնի* արձակ շարադրանքով:
	3/2	«Հայրենի տուն» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը: –*Թվարկի* ստեղծագործություններից մի քանիսը: –Արտահայտիչ *կարդա* կամ *արտասանի* բանաստեղծությունը: –Բանաստեղծության մի տունն *վերարտադրի* նկարի միջոցով:

			–*Նկարագրի* իրենց տունը՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ:
	3/3	«Հայերեն» բանաստեղծությունը	–*Արտահայտի* իր մտահոգությունը մայրենին անաղարտ պահելու վերաբերյալ՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ: –*Մեկնաբանի* մակդիրների ու համեմատությունների կիրառման արժեքը բնագրում: –*Գտնի* օրինաչափություններ «Ես իմ անուշ Հայաստանի…» բանաստեղծության հետ, *նշի* տարբերությունները: –Բանաստեղծության և կյանքի միջև կապ *տեսնի:*
	1/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-1**	_
3.	**4/1**	Հովհաննես Շիրազ: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Թագադրում» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* Հ. Շիրազի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք նրա ստեղծագործությունների հետ: –*Գնահատի* Հ. Շիրազի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: –*Արտահայտի* սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ: –*Արժևորի* բանաստեղծությունում պատկերված արթնացող բնությունը, մարդկային ապրումը և հույզը, *համեմատի* իր զգացածի հետ:
	4/2	«Թագադրում» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* բանաստեղծության բովանդակությունը և արտահայտած գաղափարը:

			–*Ներկայացնի* բանաստեղծի անձնական ապրումներն ու բնության պատկերների զուգակցումը բանաստեղծության մեջ: –*Մեկնաբանի* բանաստեղծությունը՝ զուգահեռներ անցկացնելով բովանդակության, հեղինակի կենսագրության ու ապրած ժամանակաշրջանի միջև: –*Համեմատի* բանաստեղծությունը իրեն ծանոթ այլ ստեղծագործության հետ՝ ներկայացնելով իր դիրքորոշումը:
	4/3	«Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը	–Առոգանությամբ *կարդա* (անգիր) և դատողություններ *անի* բանաստեղծության վերաբերյալ: –Բանաստեղծությունից ելնելով՝ *արտահայտի* սեփական դիրքորոշումը, *դրսևորի* սեր և հարգանք իր հայրենիքի, հայրենի բնության, հեղինակի ապրումի և հույզի, երազանքների վերաբերյալ: –*Բացատրի և հիմնավորի* բնագրի սեփական մեկնաբանությունը: –Արձակ շարադրանքով *ներկայացնի* բնագիրը՝ նրանից վերցրած հենակետային բառերի միջոցով: –*Գտնի* ու *տարբերի* բնագրի մակդիրներն ու համեմատությունները՝ դրանք ստեղծագործաբար կիրառելով գրավոր կամ բանավոր խոսքում:

	4/4	«Էքսպրոմտ» բանաստեղծությունը	–*Իմանա* բանաստեղծությունը գրելու շարժառիթն ու ժանրային առանձնահատկությունը: –*Մեկնաբանի* հեղինակի անձնական ապրումներն ու հայրենասիրական մղումների զուգակցումը բանաստեղծությունների մեջ: –*Մեկնաբանի* գործողությունների գարգացման ընթացքը և *ներկայացնի* իր դիրքորոշումը: –Ստեղծագործաբար *վերաշարադրի* բանաստեղծության բովանդակությունը՝ կիրառելով բնագրից սովորած նոր բառեր և պատկերավոր արտահայտություններ:
4.	**3/1**	Համո Սահյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: «Անտառում» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* Համո Սահյան կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: –Բանաստեղծության բովանդակությունը *շարադրի* արձակ ձևով: –*Արժևորի* բանաստեղծության մեջ արծարծված հույզերն ու ապրումները: –*Կապի* բանաստեղծության իմաստը անձնական փորձի հետ:
	3/2	«Անունդ տալիս» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* բանաստեղծության հիմնական գաղափարը, ասելիքը: –*Համեմատի* այս բանաստեղծությունը սովորած որևէ բանաստեղծության հետ՝ գտնելով ընդհանրություններն ու տարբերությունները:

			–*Գտնի* խորհրդանիշ բառը և դրանով կազմի աքրոստիկոս՝ թեմային համապատասխան:
	3/3	«Մասրենի» բանաստեղծությունը	–Բանաստեղծությունը *շարադրի* արձակ՝ հավատարիմ մնալով հեղինակի բառապաշարին: –*Գտնի* նմանություններ հայ ժողովրդի և մասրենու միջև: –*Գնահատի* բանաստեղծության բառապաշարը, *հիմնավորի* լեզվի պարզությունը:
5.	**2/1**	**Սիլվա Կապուտիկյան:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Քելե՛, լաո» բանաստեղծությունը	–*Վերարտադրի* գրողի կենսագրությունը, ներկայացնի ապրած ժամանակաշրջանը: –*Մեկնաբանի* հեղինակի մանկության և պատանեկության այն դրվագները, որոնք ազդեցություն են թողել Կապուտիկյանի ստեղծագործության վրա: –*Արժևորի* իր ազգային պատկանելիության, հայրենիքի անփոխարինելիության, պահանջատիրության, կարոտի ու արարման խորհուրդը:
	2/2	«Քելե՛, լաո» բանաստեղծությունը	–*Բացահայտի* գլխավոր գաղափարը, ասելիքը: –*Նկարի* բանաստեղծությունը՝ իրեն հատուկ զգացողությամբ: –*Գնահատի* բնագրի բառապաշարը և հարստացնի սեփական բառապաշարը: –*Համեմատի* բանաստեղծությունը իրեն ծանոթ այլ ստեղծագործության հետ. *գտնի* նմանությունները, տարբերությունները, ընդհանրությունները:

6.	**4/1**	Պարույր Սևակ: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* Պարույր Սևակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: –*Դրսևորի* հարգանք, արժանապատվություն հայ ժողովրդի և Հայաստանի հանդեպ: –Ըստ «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության՝ *ներկայացնի*՝ որ հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին: –*Վերաշարադրի*՝ ինչ է հայրենիքն իր համար:
	4/2	«Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը	–Բանաստեղծության յուրաքանչյուր տունը *վերնագրի* նրա բովանդակությանը համապատասխան և մեկ նախադասությամբ *ձևակերպի* արտահայտած իմաստը: –*Ներկայացնի* բանաստեղծության հիմնական դրվագները՝ ելնելով հեղինակային բնութագրումներից: –Ծանոթանալով բանաստեղծության նոր բառերին և արտահայտություններին, դրանք *կիրառի* խոսքում: –*Գիտակցի* իր ազգային պատկանելիությունը, հայրենիքի անփոխարելիությունը, հայրենաճանաչությունը:
	4/3	«Հայաստան» բանաստեղծությունը	–*Ներկայացնի* բանաստեղծության բովանդակությունը և արտահայտած հիմնական գաղափարը: –*Գիտակցի* հայրենիքի անփոխարինելիությունը, հայրենաճանաչությունը:

			–*Գնահատի* բնագրի բառապաշարը՝ հարստացնելով սեփականը, *օգտագործի* հեղինակային բառապաշարը բանաստեղծությունը վերլուծելիս:
	4/4	«Ծնվել եմ» բանաստեղծությունը	–*Բացահայտի* բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը: –Բնաստեղծությունից ելնելով՝ *կազմի* պլան և *վերարտադրի* արձակ շարադրանքով: –Բնագրից ելնելով՝ *ներկայացնի* ժամանակակից մարդու ներաշխարհը, նրա հույզերը:
	1/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-2**	–
8.	**6/1**	Դերենիկ Դեմիրճյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: Գաղափար պատմվածքի մասին «Ավելորդը» պատմվածքը	–*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: –*Ներկայացնի* պատմվածքի ժանրային առանձնահատկությունները: –*Մեկնաբանի* «Ավելորդը» պատմվածքի դեպքերի կատարման ժամանակաշրջանը, պատմական վայրը: –*Մեկնաբանի* «Ավելորդը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը:
	6/2	Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի կերպարները. Հաճի աղա	–*Իմանա* պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը: –*Նկարագրի* գլխավոր հերոսի արտաքինը: –Սեփական բառերով *վերարտադրի* գործողությունների զարգացման ընթացքը:

	6/3	«Ավելորդը» պատմվածքը: Եղբայրները պատմվածքում	–*Ընդհանրացնի* և հակիրճ *ձևակերպի* ստեղծագործության հիմնական գաղափարը: –Վերնագիրը *կապի* պատմվածքի բովանդակության *հետ:* –*Մեկնաբանի* հերոսների արարքների դրդապատճառները: –*Ներկայացնի* եղբայրների համեմատական բնութագիրը:
	6/4	«Ավելորդը» պատմվածքի մյուս կերպարները	–*Թվարկի* հերոսների անունները, *բնութագրի* նրանց *և առանձնացրի* գլխավոր և երկրորդական հերոսներին: –*Բնութագրի* գլխավոր հերոսին՝ մեկնաբանելով նրա արարքները: –*Բնութագրի* դուր եկած հերոսին (ներին)՝ պատճառաբանելով:
	6/5	«Ավելորդը» պատմվածքի կանայք	–*Ներկայացնի* գործող անձանց փոխհարաբերությունների (ով ում է օգնում, խաբում, սիրում, ատում …): –*Գնահատի* Հաճի աղայի արարքը գործողությունների սկզբում և տունդարձից հետո:
	6/6	Արժեքների և վերաբերմունքի ձևավորումը «Ավելորդը» պատմվածքի միջոցով	–*Անվանի* ստեղծագործության հերոսների գործողությունների դրդապատճառները (ինչո՞ւ վարվեց այսպես) և գնահատի նրանց վարքագիծը: –Իր մեջ *արմատավորի* մարդուն սիրելու, օգնելու, խնամելու ու խնայելու կարողություններ: –*Համեմատի* հերոսների արարքները, առանձնացնի լավն ու վատը, մերժելին և ընդունելին:

9.	**6/1**	Ակսել Բակունց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Սպիտակ ձին» պատմվածքը	–*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: –*Իմանա՝* ինչու է պատմվածքը վերնագրվել «Սպիտակ ձին»: –*Բացատրի՝* պատմվածքում ժամանակաշրջանը, միջավայրը ինչ կերպ են ազդում հերոսների հոգեբանության վրա:
	6/2	«Սպիտակ ձին» պատմվածքը	–*Վերլուծի* կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները: –Ստացած տեղեկությունը *մշակի,* տվյալները *վերլուծի* և եզրահանգումներ *անի:*
	6/3	«Սպիտակ ձին» պատմվածքի կերպարները	–*Թվարկի* պատմվածքի հերոսներին, համեմատի, ընդհանրություններ և տարբերություններ գ*տնի*: –*Գտնի* այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծագործության մեջ տրամադրվածություն են ստեղծում: –*Համեմատի* հերոսների արարքները, սեփական վերաբերմունքն *արտահայտի* նրանց արարքների վերաբերյալ:
	6/4	«Սպիտակ ձին» պատմվածքի սյուժեն	–*Գնահատի* Սիմոնի վարքագիծը և արտահայտի իր վերաբերմունքը: –*Մասնակցի* ստեղծագործության շուրջ ծավալած մտքերի փոխանակմանը: –Հերոսների վերաբերյալ *արտահայտի* իր զգացմունքները/ ապրումները, *փորձի* բացատրել դրանք (զարմացա, որովհետև. զայրացա, քանի որ ...):

	6/5	«Սպիտակ ձին» պատմվածքի կերպարները	–*Որոշի* պատմվածքի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, *հակադրի* տարբեր անձանց արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: –*Մեկնաբանի* հերոսների արարքների դրդապատճառները, *դրսևորի* իր վերաբերմունքը դրանց նկատմամբ կամ *գնահատի*: –*Կողմնորոշվի* տեքստի իմաստային բովանդակության մեջ և *կարողանա* պատասխանել տրված հարցերին: –*Տարբերակի* պատմվածքում հեղինակի և գործող անձանց խոսքերը, երկխոսությունը և մենախոսությունը:
	6/6	«Սպիտակ ձին» պատմվածքի վերլուծությունը	–*Հաղորդի* պատմվածքի բովանդակությունը ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: –Գործող անձի գործունեությունը *կապի* իր անհատական կենսափորձի հետ և *հիշի* նման իրավիճակներ: –*Բնութագրի* գլխավոր հերոսին՝ մեկնաբանելով նրա արարքները: –*Գնահատի* Սիմոնի արարքը՝ սեփական վերաբերմունք դրսևորելով:
10.	**4/1**	Մուշեղ Գալշոյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Մամփրե արքան» պատմվածքը	–*Ներկայացնի* Գալշոյանի կենսագրության հիմնական դրվագները: –*Իմանա* «Մամփրե արքան» պատմվածքի բովանդակությունը: –*Ներկայացնի*՝ ինչու է հեղինակը պատմվածքը վերնագրել «Մամփրե արքան»:

	4/2	«Մամփրե արքան» պատմվածքի կերպարները: Մամփրե արքայի կերպարը	–*Վերարտադրի* «Մամփրե արքան» պատմվածքի բովանդակությունը, ներկայացնի պատմվածքի հիմնական գաղափարը: –*Ներկայացնի* հերոսներին, *բնութագրի* գլխավոր հերոսին: –*Ներկայացնի* դեպքերի պատճառահետևանքային կապերը: –*Հասկանա* ստեղծագործության հերոսների զգայական վիճակը, *գնահատի* մարդկային հարաբերությունները, գեղեցիկ արարքները:
	4/3	«Մամփրե արքան» պատմվածքի կերպարները	–*Բնութագիր* հերոսներին, կարծիք *արտահայտի* հերոսների և նրանց արարքների վերաբերյալ: –*Ներկայացնի* հերոսներին, կարծիք *արտահայտի* հերոսների և նրանց արարքների վերաբերյալ: –Թեման *ծառայեցնի* սեփական մտածողության և աշխարհաճանաչողության շրջանակի ընդլայնմանը: –*Որոշի* տեքստում նկարագրված իրադարձությունների միջև եղած կապերը: –Բնագրում պատկերած պատմությունը *կապի* ներկայիս իրականության հետ:
	4/4	Պատմվածքի գեղարվեստական արժեքը	–*Գնահատի* պատմվածքի մարդասիրությունը, բարոյական բարձր հատկանիշներն ու արժեքները: –*Հարստացնի* սեփական բառապաշարը՝ օգտվելով բնագրի բառապաշարից:

11.	**5/1**	Հրանտ Մաթևոսյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Կանաչ դաշտը» պատմվածքը	– *Ներկայացնի* Մաթևոսյանի կենսագրության հիմնական փաստերը: – *Բացատրի* պատմվածքի գլխավոր գաղափարը, ասելիքը՝ ըստ հատվածի: – *Վերլուծի* կերպարներն՝ ըստ ուսուցչի կամ սովորողների մշակած հարցաշարի:
	5/2	«Կանաչ դաշտը» պատմվածքի կերպարները	– *Բացատրի*՝ հովիտը կերպա՞ր է, թե ոչ: – *Ներկայացնի*՝ ինչ ընդհանրություններ ունեն ձին և գայլը: – *Գտնի* բնագրի ժողովրդախոսակցական դրվագները:
	5/3	«Կանաչ դաշտը» պատմվածքի կերպարների համեմատական բնութագիրը	– *Գրի* պատմվածքի համար նոր վերջաբան: – *Նկարագրի* հովիտը խաղաղ ժամանակ: – *Ներկայացնի* ժայռի և կաղնու մտերմությունը. կաղնու երախտագիտությունը:
	5/4	«Կանաչ դաշտը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը	– *Մեկնաբանի* ձիու մաքառումը քուռակին փրկելու համար: – Պատմվածքի շրջանակում *կազմի* բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր: –
	5/5	Թեմայի ամփոփում	– Պատմվածքում *առանձնացնի* այն պարբերությունները, որոնցում առկա է եզրահանգում: – *Բնութագրի* կերպարներին՝ հատվածից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը:

	1/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-3**	
	4	**Կրկնություն**	

		ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ	
12.	**6/1**	Ուիլյամ Սարոյան: Կենսագրական տեղեկություն-ներ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Նոնենիները» պատմվածքը	_ _ _
	6/2	«Նոնենիները» պատմվածքը	_ _
	6/3	«Նոնենիները» պատմվածքը	_ _ _

	6/4	Պատմվածքի կերպարները	–*Ներկայացնի* կերպարներին՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: –*Բնութագրի* կերպարներին:
	6/5	Պատմվածքի կերպարների համեմատական բնութագիրը	–*Հորինի* կերպարների բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ: –*Ներկայացնի* հերոսների նմանությունները և տարբերությունները: –*Բացահայտի* շրջապատի կարծիքը հերոսի մասին: –*Ներկայացնի* հերոսների արարքների պատճառահետևանքային կապերը:
	6/6	Թեմայի ամփոփում	–*Վերլուծի* գրական կերպարները՝ ըստ ուսուցչի կամ սովորողների մշակած հարցաշարի: –*Բնագրից բերի փաստեր՝ ասածները հաստատելու համար:* –*Թեմայի* շրջանակում կազմի բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր:
	1 ժամ	Թեմատիկ գրավոր աշխատանք- 4	
13.	**6/1**	Զապել Եսայան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպը/ հատված/	–*Ներկայացնի* Զապել Եսայանի կյանքից հետաքրքիր դրվագներ: –*Տիրապետի* ինքնակենսագրական վեպի ժանրային առանձնահատկություններին: –*Անվանի* սիրելի հերոսին, գործող անձին և *բացատրի* իր ընտրությունը:

	6/2	«Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպը/ հատված/	–*Նկարագրի* վեպում ներկայացված դեպքերի հաջորդականությունը: –*Ստեղծագործաբար վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: –*Բացատրի* վեպի գլխավոր գաղափարը՝ ըստ հատվածի: –*Ընդգծի* վեպի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը, նախադասությունները՝ ըստ հատվածի:
	6/3	«Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպի / հատված/ կերպարները	–*Ներկայացնի* կերպարներին՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: –*Ճանաչի* գեղարվեստական արտահայտչականության միջոցները և *բացատրի* դրանց գործառույթը: –*Կազմի* նկարագրական բնույթի տեքստ՝ ելնելով թեմայից: –Ընթերցումից հետո *կատարի* բառային և բառարանային աշխատանքներ, բառերի բացատրություն, *կազմի* հոմանիշների շարքեր, թեմատիկ բառախմբեր:
	6/4	«Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպի/ հատված/ կերպարները	–Երկի դրվագները *կապի* իրար հետ և սահմանի գլխավոր թեման: –Բովանդակությունը *պատմի* տարբեր ձևերով (համառոտ և ընդարձակ):
	6/5	«Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպի/ հատված/ գեղարվեստական արժեքը	–*Գնահատի* գործող անձանց գործողությունները՝ նրանց վարքի և խոսքի համաձայն:

			–Հարցեր *առաջադրի* և *դպրի* ստեղծագործության մեջ զարգացող իրադարձությունների մասին: –Սեփական դիրքորոշման ամրապնդման համար *բերի* օրինակներ անձնական կյանքից:
	6/6	Թեմայի ամփոփում	–Վեպի բովանդակության մեջ ստեղծագործական հավելումներ *անի*, *կարողանա* հորինել նոր սկիզբ և ավարտ: –Թեմայի շրջանակում *կազմի* բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր: –*Տիրապետի* հարցազրույց, մենախոսություն, երկխոսություն գրելու հմտություններին:
15.	**6/1**	Վահան Թոթովենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպը/հատված/	–*Ներկայացնի* Թոթովենցի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը: –*Ներկայացնի* վերնագրի և բնագիր իմաստային փոխադարձ կապի մասին: –*Անվանի* վերնագրի այլընտրանքային տարբերակներ:
	6/2	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի /հատված/ բովանդակությունը	–*Ներկայացնի* «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպում ներկայացված դեպքերը: –Ստեղծագործաբար *վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտու-թյունները: –*Բացատրի* վեպի գլխավոր գաղափարը՝ ըստ հատվածի:

			–*Ընդգծի վեպի* գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը, նախադասությունները՝ ըստ հատվածի:
	6/3	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի /հատված/ դիպաշարը	–Գործող անձի գործունեությունը *կապի* իր անհատական կենսափորձի հետ և *հիշի* նման իրավիճակներ: –*Մասնակցի* գեղարվեստական ստեղծագործության շուրջ ծավալած մտքերի փոխանակմանը: –*Մասնակցի* թեմայի քննարկմանը: *Արտահայտի* իր զգացմունքները/ ապրումները և փորձի բացատրել դրանք:
	6/4	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի /հատված/ կերպարները	–*Թվարկի* հերոսներին՝ ներկայացնելով նրանց փոխհարաբերությունները: –*Բնութագրի կերպարներին*՝ հատվածից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: –*Բնութագրի* իր հարազատներն՝ մայր, հայր, քույր, եղբայր: –*Պատմի* սեփական կյանքից հետաքրքիր դեպքեր:
	6/5	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի /հատված/ կերպարները	–Հատվածից *առանձնացնի* հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտահայտությունները: –*Ընկալի* բառերի արժեքը Վ. Թոթովենցի ստեղծագործության մեջ: –*Գնահատի* հերոսների վարքագիծը և *արտահայտի* իր վերաբերմունքը: –*Անվանի* կարդացած վեպի թեման, դիրքորոշում *ունենա* այս թեմայի մասին:

	6/6	Թեմայի ամփոփում	–*Կազմի սահիկաշար*՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը: –*Ներկայացնի կամ թվարկի* հատվածում կիրառված գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները: –*Որոշի* վեպի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, *հակադրի* տարբեր անձանց արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:
	1 ժամ	**Թեմատիկ գրավոր աշխատանք-5**	
16.	**6/1**	Ստեփան Զորյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպը/ հատված/	–*Ներկայացնի* Ստեփան Զորյանի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը: –*Կողմնորոշվի* տեքստի իմաստային բովանդակության մեջ և *կարողանա* պատասխանել դասագրքում զետեղված հարցերին: –*Տարբերակի* վեպում հեղինակի և գործող անձանց խոսքերը, երկխոսությունը և մենախոսությունը:
	6/2	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպը/ հատված/	–*Նկարագրի* «Մի կյանքի պատմություն» վեպում ներկայացված դեպքերը: –*Ստեղծագործաբար վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: –Հատվածում ինքնուրույն *գտնի* բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառում է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար:

	6/3	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպը/ հատված/	–*Մեկնաբանիի* վեպի գլխավոր գաղափարը՝ ըստ հատվածի: –*Ընդգծի* վեպի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերն ու նախադասությունները՝ ըստ հատվածի:
	6/4	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի հատվածի կերպարները	–*Բնութագրի* կերպարներին՝ ըստ հատվածի: –*Պատմի* իր մանկության տարիներից հետաքրքիր պատմություն-ներ, *զուգորդի* վեպի հերոսի հետ: –*Որոշի* հերոսների արարքների դրդապատճառները, *դրսևորի* իր վերաբերմունքը նրանց նկատմամբ կամ *գնահատի*:
	6/5	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի հատվածի կերպարները	–*Պատմի* ստեղծագործության մեջ պատկերված պատմությունը՝ հերոսներից մեկի բերանով: –Բնագիրը ավելի լավ ընկալելու նպատակով՝ հարցեր *առաջադրի* կարդացածի հետ կապված: –Պատմելիս *օգտվի* հեղինակի ստեղծած գեղարվեստական պատ-կերներից:
	6/6	Թեմայի ամփոփում	–Գեղարվեստորեն *ներկայացնի* իր կյանքից մի դրվագ: –*Գնահատի* հեղինակի վարքագիծը և արտահայտի սեփական վերաբերմունք: –*Հարստացնի* սեփական բառապաշարը՝ օգտվելով բնագրի բառապաշարից:
17.	**6/1**	Գուրգեն Մահարի: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	–*Ներկայացնի* Գուրգեն Մահարու կյանքից հետաքրքիր դրվագներ, հուշեր, ապրած ժամանակաշրջանը, ստեղծագործության ընդ-հանուր պատկերը:

		«Պատանեկություն» ինքնակենսագրական վեպը	–*Նկարագրի* «Պատանեկություն» վեպում ներկայացված դեպքերը: –*Ներկայացնի* ժամանակաշրջանը և միջավայրը, որտեղ կատարվում են վիպական գործողությունները:
	6/2	«Պատանեկություն» ինքնակենսագրական վեպը	–*Պարզաբանի* «Պատանեկություն» վեպում գործող անձանց վարքի դրդապատճառները, կապի սեփական փորձի հետ («ինչպե՞ս կվարվեի ես ...»): –*Փորձի* կանխատեսել նրանց վարքը մեկ այլ իրավիճակում («Ի՞նչ կլիներ, եթե ...»): –Ստեղծագործաբար *վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները:
	6/3	«Պատանեկություն» ինքնակենսագրական վեպը	–*Ներկայացնի* վեպի գլխավոր գաղափարը՝ ըստ հատվածի: –*Ընդգծի* հատվածի բանալի բառերը կամ նախադասությունները՝ դրանք գործածելով գրավոր խոսքում:
	6/4	«Պատանեկություն» ինքնակենսագրական վեպի հատվածի կերպարները	–*Բնութագրի* գործող անձանց՝ մեկնաբանելով նրանց արարքների հոգեբանական շարժառիթները: –Զուգորդաբար իրար հետ *կապի* գեղարվեստական պատմությունը, իրական դեպքը:
	6/5	«Պատանեկություն» ինքնակենսագրական վեպի հատվածի կերպարների համեմատական բնութագիրը	–*Պատմի* իր մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ՝ համեմատելով պատմվածքի կերպարների հետ: –*Ստեղծի* իրեն հետաքրքրող գործող անձի երևակայական դիմանկարը:

	6/6	Թեմայի ամփոփում	–*Ներկայացնի* հերոսի արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծեր: –*Մեկնաբանի* հերոսի գաղափարական և բարոյական դիրքորոշումը, համեմատի իր դիրքորոշման հետ: –*Բացահայտի* հերոսի գաղափարական եսը՝ բնագրից բերելով փաստեր՝ ասածները հաստատելու համար:
	1 ժամ	Թեմատիկ գրավոր աշխատանք-6	
	9 ժամ	Կրկնություն	
	10 ժամ	Տարեվերջյան կրկնություն	